Հարգելի գործընկերներ, միջոցառման հարգելի մասնակիցներ, սիրելի դպրոցականներ:

Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը կազմակերպել է իր հերթական ցուցադրությունը, որը նվիրված է միջնադարյան Եղեգիս գյուղաքաղաքին և հարակից պատմամշակութային գոտածոներին:

Հայտնի է, որ Վայոց ձորը, հատկապես Եղեգիսի կիրճը, հարուստ է պատմամշակութային և բնական արժեքներով: Վստահ եմ, որ այս ցուցադրությունը ևս կնպաստի դպրոցականների, երիտասարդության, ինչու չէ, նաև մյուս մասնակիցների գեղագիտական դաստիարակության և մշակութային ճաշակի բարձրացմանը:

Այսօր մտահոգիչ է դարձել կրթության համակարգում ուսման որակի անկումը: Միգուցե ժամանակաշրջանն է այդպես թելադրում՝ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն աշխարհում իր հետ բերել է ընթեցանության, գրքի հետ կապի նվազում: Սակայն, սիրելի երեխաներ, գրքի, արվեստի, մշակույթի հետ կապն է ձեզ օգնելու կողմնորոշվել մասնագիտության ընտրության մեջ, դրսևորել նպատակին հասնելու համառ աշխատասիրություն, որով դուք կարող եք ձեզ համար ապահովել բարեկեցիկ կյանք, կատարել հայրենանվեր գործեր, սիրել ընտանիքը ու նվիրվել հայրենիքին:

Երկրագիտական թանգարանում կազմակերպված ցուցադրությունը դիտելուց հետո, հարկավոր է խորհել նաև մասնագիտական ընտրության կողմնորոշման շուրջ, քանզի մեր մարզն ունի տուրիզմի զարգացման հրաշալի հնարավորություններ, որը կարող է ապահովել բազմաթիվ աշխատատեղեր և մարզի զարգացման համար բարձր եկամուտներ :

Մարզային իշխանությունների և ՀՀ Վայոց ձորի մարզպետ պարոն Էդգար Ղազարյանի անունից շնորհակալություն եմ հայտնում թանգարանի կոլեկտիվին և ցուցադրությունը հայտարարում եմ բացված:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ 16.01.2014թ.

[illegible]՝ [illegible] Հարությունյան